



3-րդ Ազգային խորհրդակցային խմբի հանդիպում
PPRD East Ծրագիր/«Տարերային և մարդածին աղետների
կանխարգելում, պատրաստվածություն և արձագանքում արևելյան
տարածաշրջանում»

Ամսաթիվ՝ 9 Ապրիլի 2014

Անցկացման վայր՝ Անի Պլազա Հոթել, Երևան, Հայաստան

Ազգային խորհրդակցային խմբի 3-րդ հանդիպումը Հայաստանում մեկնարկեց Հայաստանի փրկարար ծառայության ղեկավար, ԱԻՆ և PPRD East ծրագրի վերստուգիչ կոմիտեի անդամ՝ պ-ն Սերգեյ Ազարյանի ողջույնի խոսքով, ով ներկայացրեց PPRD East ծրագրի ռազմավարական ուղղությունները:

Հաջորդիվ, Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ներկայացուցիչ տ-ն Ինա Իանկուլովան հանդես եկավ բացման խոսքով: Նա մասնավորապես նշեց, որ PPRD East ծրագիրն այս տեսակ առաջին ծրագիրն է տարածաշրջանում, որը վերաբերում է Աղետների ռիսկերի նվազեցմանը և շեշտեց կայուն ԱՌՆ քաղաքականությունների կարևորությունը:

Մասնակիցների ներկայանալուց հետո, PPRD East ծրագրի թիմի ղեկավար պ-ն Անագնոստին տեղեկացրեց, որ ծրագիրն ավարտվում է սեպտեմբերի 16-ին, հունիսի 13-ին նախատեսված Բոյուսելում կայանալիք եզրափակիչ Կոնֆերանսով: Նա շնորհակալություն հայտնեց ԱԻՆ-նր համագործակցության և ծրագիրը հաջողությամբ իրականացնելու համար: Նա նաև տեղեկացրեց, որ ծրագրի Փուլ II-ը հավանաբար կսկսի մինչև ընթացիկ տարվա ավարտը, հատկացված 5,5 մլն. Եվրո բյուջեով: Դա նույնպես տարածաշրջանային ծրագիր է; II փուլում միջամտության չորս ոլորտներն են.

- 1) Ազգային օրենսդրության հարմոնիզացիան
- 2) Համագործակցություն ԵՄ բնակչության պաշտպանության մեխանիզմի հետ և դաշտային վարժանքներ
- 3) Էլեկտրոնային ռիսկերի ատլասի հետագա մշակում և դրա գործնական կիրառում
- 4) Իրազեկության բարձրացում

Այնուհետև, նա ներկայացրեց մինչ օրս PPRD East ծրագրի հիմնական ձեռքբերումները:

PPRD East ծրագրի հիմնական փորձագետ պ-ն Ռադովան Հիլբերտը ներկայացրեց ծրագրի շրջանակներում մշակված Էլեկտրոնային ռիսկերի ատլասը: Նա բացատրեց,



որ ռիսկերի գնահատման ընդհանուր մեթոդաբանություն է կիրառվել գործընկեր վեց երկրների համար; ինչպես նաև պատասխանեց ատլասի կիրառման վերաբերյալ մասնակիցների հարցերին:

Պ-ն Անագնոստին հիշեցրեց, որ ծրագրի ավարտից հետո, սերվերի սեփականատերն է որոշելու տվյալների հասանելիության աստիճանը; Ազգային տվյալների բազան կլինի ԱԻՆ-ն և Գիտությունների ակադեմիայի սեփականությունը, իսկ տարածաշրջանային տվյալների բազայի սեփականատերը կհանդիսանա ԵՀ-ը:

Պ-ն Անագնոստին ներկայացրեց Գործողությունների տիրույթ B-ի արդյունքները՝ Բնակչության պաշտպանություն/Աղետների կառավարման հզորությունների զարգացում/ԱՌՆ: Ծրագրի ազգային համակարգող պ-ն Եմիշյանը խնդրեց, որպեսզի հրավեր-նամակներում որպես պահանջ նշվի համապատասխան նախարարություններից միննույն պատվիրակների մասնակցությունը հաջորդական դասընթացներին:

Այնուհետև, պ-ն Անագնոստին բացատրեց Ընդունող երկրի աջակցության հետազոտության նպատակները: Նա հիշեցրեց, որ դեռևս ակնկալվում է ստանալ Բնակչության պաշտպանության գործառնական ուղեցույցի համար տեղեկատվությունը:

Պ-ն Արա Ասլանյանը՝ ԱԻՆ, Արտաքին կապերի վարչությունից, շնորհակալություն հայտնեց PPRD East ծրագրի շրջանակներում կազմակերպված ուսուցումներին մասնակցելու հոյակապ հնարավորության, ԵՄ Բնակչության պաշտպանության մեխանիզմին ծանոթանալու և պատկերացում կազմելու համար:

Պ-ն Ավետյանը Գյուղատնտեսության նախարարությունից հետաքրքրվեց, թե արդյոք կա մեթոդաբանություն՝ աղետների հետևանքները ֆինանսապես գնահատելու համար, քանի որ հաճախ տարերային վտանգների հետևանքով առաջացած աղետներից հետո, (ինչպես օրինակ կարկուտն է), իրենցից պահանջվում է գնահատել հասցված վնասը գումարային տեսքով, ինչը դժվար է կատարել:

Պ-ն Անագնոստին պատասխանեց, որ աղետների հասցրած տնտեսական վնասի խնդիրը PPRD East ծրագրի շրջանակներից դուրս է, սակայն գոյություն ունի ՀԲ մի օգտակար հրատարակում, որը վերաբերում է վնասների արժեքին և ռիսկերի փոխանցմանը ապահովագրական ընկերություններին կամ ազգային արտակարգ իրավիճակների ֆոնդերին: UNISDR սկսել է մշակել նախորդ աղետների տնտեսական կորուստների տվյալների բազա:

Պ-ն Եմիշյանը նշեց արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց հասցված վնասների գնահատման վերաբերյալ թիվ 1582 Կառավարության որոշումը, համաձայն որի համայնքային, տարածաշրջանային և



EU funded Programme for the Prevention, Preparedness and Response to Man-made and Natural Disasters
in the ENPI East Region (PPRD East)

Երկրի մակարդակում պետք է հիմնվեն հանձնաժողովներ, սակայն դրա հիմքում որևէ մեթոդաբանություն չկա, քանի որ յուրաքանչյուր Նախարարություն գնահատում է կիրառելով իր իսկ ուրույն մեթոդաբանությունը: Նախարարություններին չի հաջողվել որդեգրել մի ընդհանուր մոտեցում՝ կորուստները գնահատելու համար: Երկու խնդիր է առկա՝ առաջինը, որ Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացած չէ, և բոլոր վնասները պետք է հատուցվեն Պետության կողմից: Ներկայումս, ԱՌՆ Ազգային պլատֆորմը առաջարկել է ստեղծել Աշխատանքային խումբ՝ ռիսկերի փոխանցման խնդրի լուծմանը հասնելու համար: Շահագրգիռ նախարարությունների մասնակցությունը այդ Աշխատանքային խմբին նույնպես խրախուսվում է:

Պ-ն Նիկոլայ Գրիգորյանը, ԱՌՆ ՓԾ ղեկավարի տեղակալ և Հյոգո գործողությունների շրջանակային կոնվենցիայի ներկայացուցիչը Հայաստանում (HFA Focal Point), լրացրեց, որ HFA-2 շրջանակներում նախատեսվում է ավելի մեծ ուշադրություն դարձնել թաքնված ռիսկերին, քանի որ նախորդ տարիների հաշվետվությունները չեն դիտարկել նմանատիպ ռիսկերը: Խոցելիությունը, դրա հաղթահարելու համար անհրաժեշտ կարողությունները հասկանալու համար, և տնտեսական վնասները գնահատելու համար, անհրաժեշտ է 100 տարի հետ նայել:

Պ-ն Անագնոստին հիշատակեց ԵՄ աղետների կանխարգելման վերաբերյալ հաշվետվությունը, որն ևս դիտարկում է ռիսկերի տեղափոխումը, ապահովագրման ու վերաապահովագրման մոդելները: Այնուհետև նա շարունակեց ներկայացնել ինստիտուցիոնալ և իրավական վերլուծության ոլորտում կատարված և բնապահպանական առումով արտակարգ ծրագրերի ուղղությամբ ծավալված աշխատանքները: Իրավական և ինստիտուցիոնալ վերլուծության վերջնական հանձնարարագրերը հասանելի են Ծրագրի ինտերնետային կայքում:

Տարածքային կառավարման նախարարությունից պ-ն Կարեն Բաքոյանը անդրադարձավ իրավական և ինստիտուցիոնալ վերլուծությունից բխող հանձնարարականին, այն է՝ կատարելագործել տեղական ինքնակառավարման մարմինների վերաբերյալ օրենսդրությունը: Նա տեղեկացրեց, որ ՏԿՆ առաջարկել է Ազգային ժողովին՝ վերանայել և ուղղում մտցնել համայնքային քառամյա զարգացման ծրագրի մասին Օրենքում և որպես պահանջ ներառել աղետների ռիսկերի կառավարման մոտեցումները:

Պ-ն Եմիլյանը պարզաբանեց, որ ԵՄ օրենսդրության համեմատ հիմնական տարբերություններից է այն, որ աղետների ռիսկերի նվազեցումը տեղական կառավարման մարմինների ուղիղ պարտականությունն է, իսկ Հայաստանում դրանց ներգրավվածությունը ԱՌՆ գործում պարզապես կամավոր բնույթ է կրում:



EU funded Programme for the Prevention, Preparedness and Response to Man-made and Natural Disasters
in the ENPI East Region (PPRD East)

Պ-ն Անագնոստին լրացրեց, որ տարբեր վարչական մակարդակների միջև համագործակցության ենթատեքստում խորհուրդ է տրվում վերանայել հաղորդակցության հոսքը: Այնուհետև նա ներկայացրեց Պոչամբարների կառավարման վերաբերյալ ծրագիրը, և PPRD East գործընկեր երկրների հերթական երկրորդ ուսուցմանը մասնակցելու համար պահանջները, որը տեղի կունենա PPRD East ծրագրի ավարտից հետո:

Պ-ն Եմիշյանը նկատեց՝ քանի որ մինչև առաջին ուսուցումը քիչ ժամանակ է մնացել, նախընտրելի է հրավերները հնարավորինս շուտ ստանալ, որպեսզի ապահովվի մասնակիցների թեկնածությունների ներկայացումը այլ նախարարություններից:

Պ-ն Տիգրան Թովմասյանը UNICEF-ից անդրադարձավ նշված «պոչամբարների անվտանգության ուղեցույցներն ու պրակտիկան» փաստաթղթին և խնդրեց հասկացնել PPRD East հիմնական փորձագետ պ-ն Ջոն Վիյգենի կողմից պատրաստված ցանկը: Պ-ն Եմիշյանը անդրադարձավ պ-ն Թովմասյանի կողմից բարձրացված հարցին և խնդրեց դիտարկել ուղեցույցների փաթեթը ռուսերեն թարգմանելու հնարավորությունը:

Պ-ն Անագնոստին քաջալերեց բոլոր հետաքրքրված մասնակիցներին՝ օգտվել հնարավորությունից և Գերմանիայի բնապահպանական գործակալության հետ քննարկել Հայաստանում նմանատիպ ծրագիր իրականացնելու հնարավորությունը:

Հաջորդիվ, PPRD East ծրագրի հաղորդակցության հիմնական փորձագետ պ-ն Վլադիմիր Կուզնեցովը ներկայացրեց Գործողությունների տիրույթ D՝ ուղղված բնակչության պաշտպանության ոլորտում իրազեկության մակարդակի բարձրացմանը: Նա, մասնավորապես, տեղեկացրեց մասնակիցներին արտակարգ իրավիճակները լուսաբանող լրագրողների համար անցկացված ուսուցանման մասին, ներկայացրեց PPRD East ծրագրի շրջանակներում մշակված տեղեկատվական նյութերը, ինչպես նաև Հայաստանում անցկացված տեղեկատվական արշավի արդյունքները:

Պ-ն Գրիգորյանը նշեց, որ սոցիալական հոլովակը ցուցադրվել է Հայաստանում երկու հեռուստատալիքներով, լավագույն եթերաժամերին, ինչը սովորաբար բավականին լայն լսարան է գրավում: Ընտանեկան ուղեցույցը ադապտացվել է հայերեն և տարածվել բոլոր նախարարությունների, միջազգային գործընկերների, դպրոցական երեխաների շրջանում; այն դրական կարծիք է ստացել նաև ԱԻՆ նախարարի կողմից: Պ-ն Ավագյանը Առողջապահության նախարարությունից հետաքրքրվեց միջազգային կամավորական կազմակերպություն ստեղծելու հեռանկարների մասին, որը կհամախմբի Հայաստանում գործող կամավորական ջոկատները:



Պ-ն Անագնոստին մանրամասնեց PPRD East ծրագրի երկրորդ փուլի հիմնական ուղղությունները, ակնկալելով լսել մասնակիցների կարիքները և ծրագրի երկրորդ փուլից նրանց սպասումները:

Այդ կապակցությամբ, պ-ն Գրիգորյանը շեշտեց լրատվամիջոցների կարողությունների զարգացման կարևորությունը հանրային իրազեկության մակարդակի բարձրացման գործում, երկրորդ առաջնահերթ խնդիրը որ նա նշեց՝ լրագրողների ուսուցման համար ժամանակակից սարքավորումներով և տեսա-լսատպագիր նյութերով հագեցած ռեսուրսային կենտրոնների ստեղծումն էր: Բացի այդ, նախատեսվում է անցկացնել ևս մեկ միջազգային կոնֆերանս 2014 թ. դեկտեմբերին, ակնկալելով ամփոփել հանրային իրազեկման պահանջները HFA-2 շրջանակներում, այն է՝ ինչպես բարելավել լրատվությունը, նորությունների պատրաստումը արտակարգ իրավիճակների ժամանակ, ինչպես բարձրացնել իրազեկության մակարդակը բնակչության շրջանում նախքան աղետը և մասնավորապես երկրաշարժից առաջ, Հայաստանի պարագայում, և աղետներից հետո: Այդ կապակցությամբ, նա առաջարկեց, որ Ծրագիրն աջակցի վերոնշյալ կարևոր կոնֆերանսի կազմակերպմանը:

Անդրադառնալով էլեկտրոնային ռիսկերի ատլասին, պ-ն Եմիշյանը առաջին հերթին Ծրագրի կողմից տեխնիկական աջակցություն ստանալու ակնկալիք արտահայտեց, որպեսզի ապահովվի ԵՏՀ գործողությունը, մասնավորապես կղիտարկվի կատարելագործված հզորությամբ սերվերի, համակարգիչների և լիցենզիոն ծրագրերի տրամադրումը: Այնուհետև նա շեշտեց ԵՄ փորձագետների հետ «նույն լեզվով հաղորդակցվելու» կարևորությունը և առաջարկեց Ծրագրի Փուլ II-ում կազմակերպել լեզվի ուսուցում տեղի երիտասարդ խոստումնալից մասնագետների համար: Երրորդը, նա առաջարկեց նախատեսել դաշտային ուսումնավարժանքներ բոլոր վեց գործընկեր երկրների մասնակցությամբ, ներգրավելով UN INSARAG մեթոդաբանության հիման վրա աշխատող փրկարարների թիմեր: Մյուս բարձրացված առաջարկը վերաբերում էր Բնակչության պաշտպանության թեմայով հաջորդ մակարդակի խորացված դասընթացներին: Մասնագիտական զարգացման առումով, պ-ն Եմիշյանը առաջարկեց նախատեսել նաև բնապահպանության թեմայով ուսուցումներ:

Պ-ն Անագնոստին պարզաբանեց, որ ծրագրի Փուլ II-ը նախատեսում է ծառայությունների տրամադրում և բացառում է սարքավորումների տրամադրումը:

Պ-ն Ասլանյանը առաջարկեց Փուլ II-ում ներառել Միջազգային համակարգման դասընթացը և Բարձր մակարդակի դասընթացը մի քանի ընտրված մասնագետների համար, որոնք ծրագրի առաջին Փուլում արդեն մասնակցել են սկզբնական դասընթացներին: Հաշվի առնելով, որ Ճգնաժամային կառավարման ակադեմիայի Ուսումնական կենտրոնը (տեղակայված է Լուսակերտում) ներկայումս



EU funded Programme for the Prevention, Preparedness and Response to Man-made and Natural Disasters
in the ENPI East Region (PPRD East)

վերանորոգվում է, նա առաջարկեց, որ փորձագետների փոխանակման գործողության շրջանակներում ծրագրի Փուլ II-ը աջակցի հայաստանյան և այն ՄԹ փորձագետների միջև լավագույն փորձի փոխանակմանը, որոնք պատասխանատու են մասնագիտական ուսուցումների կազմակերպման և կառավարման համար այդ երկու Ուսումնական կենտրոններում: Նա նշեց, որ նախնական համաձայնություն կա այդպիսի փորձի փոխանակման վերաբերյալ ՄԹ Հրշեջ ծառայության քոլեջի հետ: Պ-ն Եմիշյանն առաջարկեց փորձագետների փորձի փոխանակման շրջանակներում նախատեսել բազմազան ԱՌՆ ուղղություններ:

Եզրափակիչ խոսքում պ-ն Գրիգորյանը շնորհակալություն հայտնեց PPRD East ծրագրի թիմի ղեկավարին, նշեց, որ PPRD East ծրագրի Փուլ I-ն արդեն արժեքավոր դասեր քաղելու հնարավորություն տվեց և ոգեշնչեց հետագայում ավելի թիրախային և արդյունավետ կերպ աշխատել, հաջորդ փուլում առավելագույնը քաղելու համար: